

Գ Ա Ի Ա Ռ Ա Կ Ա Ն Կ Ե Ա Ն Ք

I

ԱՆԲԵՐՐԻՈՒԹԻՒՆԸ ԱՆՍԻՔԱՆՔԻ ԳԱՒԱՌՈՒՄ ԵՒ ՆՐԱ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ

Հացի բզեզը և հօտննությունն մլուսը Ախալքալաքի դաշտերում 1899 և 1900 թ.—Մասնագէտ անձանատրութիւնների այցելութիւնը.—15 հազար ուրլու փոխատրութիւնը.—Հարկերի կանոնատր վճարումը.—Միջատներից վնասուած գիւղացիների դրութիւնը այս ձմեռ.—Գլխատր կօմիտէտի հոգացութիւնը.—Հասարակական աշխատանք.—Գլխատր կօմիտէտի երկու անդամների այցելութիւնը և նրանց ուսումնասիրութիւնը.—Առաջին աստիճանի վնասուած 23 գիւղերը, ստորաբաժանուած երեք կարգի՝ կարօտութեան աստիճանի համաձայն.—Երեք հազար ուրլու նպաստը.—Տեղական կօմիտէտը և կազմակերպուած օգնութեան սկիզբը.—Քաղցածների բնօրտրացիան իննը գիւղերում.—Առաջին անգամ ալիւրի բաժանում.—Երեք հազար ուրլու՝ կտաատի և գետնախձորի սերմացուի համար:

Ինչպէս յայտնի է «Մուրճի» ընթերցողներին, Ախալքալաքի գաւառը ենթարկուեց սչ միայն երկրաշարժի աւերմունքներին, այլ և վնասակար միջատների, այն է՝ հացի բզեզի և հօտննությունն կամ մաւրեան մլուսի արշաւանքին, որից հազարաւոր գիւղացիներ ընկան մեծ կարօտութեան մէջ, և տասնեակ գիւղերի բարօրութիւնը երկար տարիներով քայքայուեց:

Այդ միջատները առաջին անգամ մեր գաւառում երևացին 1899 թուի գարնանը և մեծ վնասներ տուին գլխատրապէս 13 գիւղերի արտերին, մանաւանդ հացի բզեզը: Դրանց մասին սրաջին անգամ այստեղ իմացուեց և տեղական մի երկու ինտելիգենտ անձնատրութիւնների միջոցով յայտնուեց մամուլին և իշխանութեանը այն ժամանակ միայն, երբ միջատները մեծ քանակութեամբ տարածուել էին և սպառնական գիրք էին բռնել: Ոչ ոք մինչև հիմա էլ չը գիտէ դրանց այստեղ երևալու կամ գոյանալու պատճառը և անցեալ պատմութիւնը, չը նայած որ մենք այստեղ մասնագէտներ ունենք, գիւղատնտեսական հիմնարկութիւն ունենք: Գիւղացիները ենթադրում են, թէ

Ռուսաստանից բերել տուած քաղաքային դպրոցի փորձնական դաշտում կամ պ. Լ. Ղուկասեանի ցուցադաշտերում ցանած սերմացուի հետ են եկել այդ բզէզների ձուերը. բայց մենք անհիմն ենք համարում այդ ենթադրութիւնը:

Ոչինչ չը գիտենք այդ միջատների դէմ կուելու մասին և դրսից ոչ մի խորհուրդ կամ օգնութիւն չը ստացանք՝ բացի մի քանի հակասական և ոչ-դրական խորհուրդներէր: Այդ պատճառով անգոր ժողովուրդը մեծ անհանգստութեամբ և անորոշ զգացմունքներով էր սպասում երկրորդ տարուան: Դեկտեմբերի 19-ի սոսկալի երկրաշարժը պակասը լրացրեց: Գլուխը կորցրած ազգաբնակչութիւնը թէ միջատներին, որոնց մասին առաջ ոչինչ չէր լսել, և թէ երկրաշարժը Աստուծու պատիժ էր համարուած: Երկրաշարժի տպաւորութիւնը դեռ թարմ էր, և գիւղացին դեռ չէր սփոփուել նրա ծանր հարուածներից, երբ 1900 թուի գարնան բացուելուն պէս միջատները, գլխաւորապէս հօտենտօտեան մլուկը, համարեա գաւառի կէսը բռնելով՝ սկսեցին իրանց աւերածութիւնները:—Եթէ միայն 1899 թ. հացի բզէզը լինէր, մեր դաշտերը 1900 թուի գարնանը պէտք է ազատ մնային նրանց սերունդի աւերածութիւններից, որովհետեւ 1899 թ. ամառը նրանք ձու ածելուց յետոյ՝ ոչնչացել էին, իսկ ձուերից դուրս եկած թրթուռները մօտ երկու տարի (22 ամիս) պէտք է մնային գետնում ու միայն այս 1901 թ. գարնանը՝ պատենաւոր, ապա բզէզ դառնային: Ահա ինչո՞ւ Հարաւային Ռուսաստանում հացի բզէզի աւերածութիւնները տարումէջ են տեղի ունեցել, օրինակ, 1874, 1876, 1878 և 1880 թուականներին: Բայց ցաւալին այն է, որ մեր դաշտերում անցեալ 1900 թուի գարնանը և ամառը աւերածութիւններ արին, ինչպէս և 1899 թուին և հօտենտօտեան մլուկը, և՛ բզէզը, որ անկասկած 1899 թուի բզէզի սերունդը չէ, այլ նոր բզէզ է: Այդ է պատճառը, որ այստեղ մնասը անհամեմատ աւելի մեծ է, քան ուրիշ այնպիսի տեղերում, ուր, դիցուք, երեացել է կամ միայն բզէզ, կամ մլուկ: Բացի այդ արհաւիրքներից՝ ամառուայ ընթացքում մեծ մնաս պատճառեցին, գլխաւորապէս միջատների շրջանից դուրս արտերին, ժանգը և եղեամբ:

Ձէր կարելի է հարկէ, լուրջ ուշադրութիւն չը դարձնել այս մեծ աղէտի վրայ: Գիւղացիների դրութեան հետ ծանօթանալու համար՝ ամառուայ ընթացքում ամենից առաջ մեր գաւառը այցելեց «Մշակի» խմբագիր պ. Ա. Գալանթարը. ապա երկրագործութեան և պետական կալուածների միջխտրութեան Կովկասի լիազօրի կողմից՝ ազրոնօմ պ. Ա. Սահակեանը, որ այցելելով միջատներից մնասուած բոլոր 45 գիւղերը, վերածեց

Նրանց երեք կարգի, ամենից շատ վնասուած գիւղերի թիւը հաշուելով 23: Հէնց այդ ժամանակ էլ ընդհանուր վնասների չափը որոշուեց մօտ 400 հազար ուրբլի: Աշխան սկզբին պ. Սահակեանը երկրորդ անգամ այցելեց մեր գաւառը՝ նահանգապետի կողմից նշանակած պաշտօնեայ Բարանօվսկու հետ: Այդ այցելութեան հետևանքը այն եղաւ, որ իշխանութիւնը վճռեց—գաւառի գիւղատնտեսական դրամալիւից 15 հազար ուրբլի փոխառինարար բաժանել ամենից շատ վնասուած գիւղերին, որ մերմացու առնեն և աշխան ցանքս անեն, որովհետև հաւանական են թաղրութիւն կայ, թէ միջատները քիչ են վնասում աշխանացան արտերին:

Բայց նեղուած գիւղացին այդ ժամանակ չէր էլ մտածում աշխանացանի մասին. ստացած փողի մի մասով նա վճարեց իրանից պահանջող պետական, զեմսկի և դպրոցական հարկը, իսկ միւս մասով մի քանի շաբաթուայ համար հացահատիկ առաւ: Պէտք է նկատած, որ նոյն իսկ այսպիսի նեղ հանգամանքներում մեր գաւառի գիւղական ազգաբնակչութեան վրայ պետական, զեմսկի և դպրոցական հարկից ոչ մի կոպէկ ապառիկ չը կայ, որի համար նրանց յայտնուել է նահանգապետի հնորհակալութիւնը: Շատերին այդ բանը տարօրինակ է թւում. ասում են թէ հէնց միայն դա կարիքի բացակայութեան ապացոյց է, որովհետև, նրանց ասելով, նոյնաման դէպքերում ներքին նահանգներում չեն կարողանում հարկը ժողովել, նոյն իսկ անկարգութիւններ են լինում: Բայց զարմանալու ոչինչ չը կայ. դա այստեղի գիւղացու յատկութիւնն է. նա պատրաստ է շապիկը ծախելու, միայն թէ պետական հարկը իր ժամանակին վճարէ: Այդ է պատճառը, որ ամբողջ Թիֆլիսի նահանգից միայն Ախալքալաքի և մասամբ Ախալցխայի գաւառն է, որ երբէք հարկի ապառիկներ չեն ունենում:

Հին հացահատիկ չունենալով գիւղացիները հէնց ամառուայ վերջին կամ աշխան սկզբին հացի մեծ կարիք էին զգում, բայց յոյս ունենալով արտաքին օգնութեան վրայ՝ չէին վճռում իրանց ունեցած-չունեցած անասնեղէնը հնչին գներով ծախելու: Նրանք թէ մինչև 15 հազար ուրբլու բաժանելը և թէ այդ գումարից ստացած հնչին բաժինները վերջանալուց յետոյ՝ մի առժամանակ դիմում էին քաղաք՝ տեղական իշխանութեան և նպաստ էին խնդրում շարունակ:

Հէնց այդ ժամանակ և թէ յետոյ աղքատ գիւղացիների մէջ եղան խեղազարուողներ, իսկ ոմանք ինքնասպանութեան յուսահատական միջոցների էին դիմում: Սակայն ոչ մի տեղից նպաստ չը ստանալով՝ յոյսերը կտրեցին և շատերը սկսե-

ցին պանդխտել, գլխաւորապէս, Թիֆլիս, Բաթում և Բագու. շատ անճար գիւղացիներ ցրուեցին շրջակայ գաւառների գիւղերը և ծառայ մտան, կամ ուղղակի սկսեցին մուրալ: Այստեղացի 15 ծառայ կայ միայն Կարսի շրջանի՝ Մազրա գիւղում, որի բնակիչները մօտ 15 տարի սրանից առաջ գաղթել են այստեղի նախկին Չիֆլիկ ամենաաղքատ և կորած գիւղից և այդ նոր հողաշատ տեղը հարստացել են: Ունեցողներն էլ սկսեցին չնչին գներով ծախել սկզբից ոչխարը, ապա գիւղացու բարօրութեան հիմքը կազմող եզները, կովերը: Գիւղացին պակաս օգնութիւն չը ստացաւ և այս տարուայ առատ խոտի վաճառումից: Բայց ցաւելով պէտք է ասեմ, որ այս բոլոր միջոցները վերջանալուց յետոյ՝ Վաչխան և Չանդուրա գիւղում եղան աղքատ գիւղացիներ, որոնք, իրանց գոյութիւնը պահպանելու համար՝ սկսեցին տների ծածկը քանդել ու գերանները ծախել...

Կարծես բաւական չէին բնութեան անողոր հարուածները. ասպարէզ եկան և հողատէրերը իրանց պահանջներով: Նրանցից մէկը, Ղըրիքեսաւով, վաչխանցիներից չորս հազար ուրլուց աւելի էր պահանջում, բայց գիւղացիների հետ «հաշտութիւն» կայացնելով, բաւականացել է 1700 ուրլովով, այն պայմանով միայն, որ այդ գումարը խեղճ վաչխանցիները վճարեն մինչև մարտի 23-ը... Սարսափելի ուլախմատում: Այսպիսով խեղճ վաչխանցիները պէտք է տուգանք վճարեն բնութեան փոխարէն. բայց ինչպէս պէտք է նրանք անցնեն միջատների և կալուածատէրերի նման Սկիլլայի և Քարիբդայի միջով... Սակայն գոնուեցին կալուածատէրեր (Յարութիւնեան և Բաբուրցեան), որոնք իրանց հասնելիք գումարի մի մասը բաշխեցին գիւղացիներին կամ պահանջը յետաձգեցին:

Ահա այսպէս անմխիթար է գիւղացիների ներկայ դրութիւնը:

Ապագան էլ շատ անորոշ է: Երկար մտածելուց յետոյ՝ վճռել են փորձի համար շատից-քչից ցանքս անել, եթէ միայն սերմացու ճարուի: Չէ որ հացի բզէզը և, մանաւանդ, հօտենտօտեան մլուկը իրանց պարազիտը ունեն, մի միջատ, որ բոյն դնելով նրանց մարմնի մէջ՝ արագութեամբ ոչնչացնում է նրանց: Գոնէ ուրիշ տեղերում հօտենտօտեան մլուկը ոչնչացուել է պարազիտի շնորհիւ՝ երրորդ, չորրորդ տարում: Գուցէ այստեղ էլ, առանց արհեստական միջոցների, բնականաբար ոչնչանան նրանք, և մեր գիւղացին կրկին իր վաստակի տէրը դառնայ: Սակայն շատերը մտազիր են ընտանիքներով մարաբայութեան գնալ գաւառի շրջակայ սար գիւղերը և շրջակայ գաւառները:

Մարաբա գիւղացին առհասարակ կալուածատիրոջ կամ միւս գիւղացու սերմացուով, եգներով և գործիքներով մշակում է նրա հողը և բերքից՝ սերմը դուրս գալուց յետոյ, ստանում է մի երրորդ կամ կէս մասը: Բացի դրանից՝ մարաբան իր ընտանիքով պարտական է կատարելու հողատիրոջ և միւս անական գործերը: Շատերը մտադիր են գնալ Կարսի վերև յիշած Մագրա գիւղը, որի բնակիչները, այստեղի ներկայումս աւերակ Չիֆլիկ գիւղում եղած ժամանակ, հող չունենալու պատճառով, այստեղի գիւղացիների ողորմութեամբ էին ապրում:

Գիւղացիների այս ողբալի դրութեան մասին շարունակ հաղորդում էր մամուլին և նահանգական իշխանութեանը, որ և լուրջ ուշադրութիւն դարձրեց այս ճգնաժամի վրայ: Երկրաշարժից մնասուած գիւղացիներին օգնող գլխաւոր կոմիտէտը իր հոգացողութեան տակ առաւ և՛ միջատներից վնասուած գիւղացիներին և ամենից առաջ մտածեց հասարակական աշխատանքի մասին: Կարծում էին, թէ կարելի կը լինի Ախալքալաքի և Ալէքսանդրոպոլի ճանապարհի՝ մեր գաւառում գտնուող մասը խճուղել և բոլոր աշխատութիւնները յանձնել միջատներից մնասուած գիւղացիներին. բայց այդ ճանապարհի շինութիւնը ոչ մի կերպ չէր կարելի այս տարի սկսել: Գլխաւոր կոմիտէտը վճռեց երկրաշարժից մնասուած գիւղերում շինուելիք նոր տների համար հարկաւոր գերանների կտրելը Չուքարէթի անտառում և այնտեղից մինչև երկրաշարժից մնասուած գիւղերը բերելը յանձնել միջոցներից մնասուած գիւղացիներին: Բացի դրանից՝ գլխաւոր կոմիտէտը պայմանաւորուել է նոր տների շինութիւնը յանձն առած կատալառուի հետ, որ շինութիւնների համար հարկաւոր բանուորները վերցնէ միջատներից մնասուած գիւղացիներից: Սակայն հազիւ թէ մեր գիւղացին օգտուի այդ կապալառուից:

Այստեղ կարելի էր երկու տեսակ հասարակական օգտուէտ և նպատակայարմար աշխատանք ստեղծել: Առաջինը՝ կարելի էր մեր գաւառի գիւղատնտեսական մօտ 300 հազար ուրբլի դրամագլխի գէթ մի մասը, դիցուք մի հարիւր հազար ուրբլի, գործադրել գոնէ մի երկու գլխաւոր ջրանցքներ անց կացնելու՝ ոռոգման կարօտ, բայց ջրառատ մեր գաւառում: Այդ բանը կարող էին անել և դրամատէրերը՝ իրանց դրամը յետ ստանալու պայմանով. բայց ոչ նախաձեռնող կայ, ոչ էլ կարող ձեռք: Երկրորդը՝ կարելի էր մեր քաղաքը ջուր բերելու կամ փողոցները սալաշատակելու գործը սկսել: Բայց մեր քաղաքային վարչութեան ներկայ կազմը հնարաւորութիւն չի տալիս նոյն իսկ մտածել այդ բաների մասին:

Բացի վերև գրածից՝ գլխաւոր կօմիտէտը հարկաւոր համարեց մօտիկուց և անմիջապէս ծանօթանալ վնասուած գիւղացիների անտեսական դրութեան և իսկական կարիքի չափերի հետ: Այդ նպատակով մեր քաղաքը և գաւառը այցելեցին և փետրուարի 18—19-ն ուսումնասիրութիւններ կատարեցին գլխաւոր կօմիտէտի անդամներ՝ «Մշակի» խմբագիր պ. Ալ. Քալանթար և յայտնի կովկասագէտ Ե. Գ. Վէյդենբաում: Նրանք քաղաքում տեղեկութիւններ ժողովեցին գաւառական և գիւղական բժիշկներից, թէ քաղցածութիւնից առաջ չէն եղել արդեօք հիւանդութիւններ. տնասնարոյժից՝ մասցու կենդանիներ արտահանելու մասին. մսավաճառներից և ալիւրավաճառներից՝ թէ որ գիւղից են գլխաւորապէս անասուններ վաճառում և ալիւր գնում:

Ապա կօմիտէտի այդ երկու անդամները տեղական գաւառագետի հետ այցելեցին Չանդուրա, Վաչիան և Դելիսկա գիւղերը՝ տեղն ու տեղը ուսումնասիրելու նրանց վիճակը: Բոլոր վերև գրածները և թէ առաջ լրագրների հաղորդածները մի առ մի հաստատուում են: Ամեն գիւղում մի քանի տասնեակ տներ կան, որոնք ոչինչ չունեն ուտելու և վերջերս քաղցում են բառի իսկական մտքով: Բարեբախտաբար հիւանդութիւններ և սովի ուրիշ նշաններ դեռ չեն երևացել, գլխաւորապէս այն պատճառով, որ շրջակայ գաւառներում, նոյն իսկ մեր գաւառի մի քանի գիւղերում այս տարի հացը առատ է և տոհասարակ համեմատաբար աւելի էժան է՝ քան 1899—1900 գիւղատնտեսական տարում: Բացի դրանից, ինչպէս առաջինը, շատերը պանդխտեցին, շատերը անասնեղէնը ծախեցին, անասուն չունեցողները խոտ ծախեցին և այլն: Շրջակայ գիւղերից ամեն օր աղքատ գիւղացիները ամենաէժան գներով թխած հաց էին առնում տեղական զօրանոցներից: Ահա այդ մի քանի հանդամանքների պատճառով մինչև հիմա սովի առաջն առնուել է:

Բայց հիմա գիւղացու վերջին ուժերը սպառուել են, և եթէ հասարակութիւնը օգնութեան չը հասնէ, կարող է իսկական սով առաջանալ: Որովհետև միջոց չունենալու պատճառով չի կարելի բոլոր մնասուած գիւղացիներին օգնել և նրանց հարիւր հազարների հասնող կորուստը վերադարձնել, և որովհետև այդ միջատները կարող են այս ամառ կրկին ասպարէզ գալ, ուստի եկան հետևեալ եզրակացութիւնների. գիւղացիներին խորհուրդ տալ, որ այս գարնան քիչ ցանեն, այն էլ գլխաւորապէս կտաւատ և գետնախնձոր, որ այնքան էլ ենթակայ չեն միջատների աւերմունքներին (կտաւատը միշտ լաւ գին է ունենում): Բացի դրանից՝ այս տարի օգնել միայն առաջին կարգի 23 գիւ-

զերին՝ թէ սերմացու և թէ ալիւր բաժանելով կարօտներին, որ դրանով գծրախտութիւններ յառաջն առնուի: Այդ գիւղերն էլ կարօտութեան տեսակէտից բաժանուեցին երեք կարգի, որոնցից առաջին օգնութիւնը պէտք է հասցնուի առայժմ միայն առաջին կարգի վնասուած գիւղերի քաղցած ընտանիքներին: Ահա այդ 23 գիւղերի անունները, որոնք կարօտութեան աստիճանի համեմատ բաժանուած են երեք կարգի.

Առաջին կարգի գիւղեր՝

1. Վաչիան,
2. Օրճա,
3. Դելիսկա,
4. Կորիս,
5. Գիւմիւրդա,
6. Չանդուրա,
7. Մաճաղիա,
8. Քիլգա և
9. Մուրճախէթ:

Երկրորդ կարգի՝

1. Ղուլալիս,
2. Մեծ-Խօսպիա,
3. Փոքր-Խօսպիա,
4. Պրտնա,
5. Չունչիա,
6. Ախնիա,
7. Գուգաշէն և
8. Քոթեկիա:

Երրորդ կարգի՝

1. Արագովա,
2. Ջիգրաշէն,
3. Տրկնա,
4. Ալջուա,
5. Խանդօ և
6. Ջաք:

Առաջին կարգի գիւղերի քաղցածներին կերակրելու և սերմացու (կտաւատ և գետնախնձոր) տալու համար, առնուազը, հարկաւոր կը լինի մօտ 25 հազար ռուբլի:

Ե. Գ. Վէյզենբաուս այստեղից հեռագրեց գլխաւոր կօմիտէտի նախագահ Թիֆլիսի պ. Նահանգապետին, որ անհրաժեշտ է շուտափոյթ օգնութիւն հասցնել առաջին կարգի գիւղերի քաղցածներին: Նահանգապետը այդ նպատակով հեռագրով փոխադրեց 3000 ռուբլի, որ ալիւր առնուի և բաժանուի կարօտներին:

Այդ պատճառով փետրուարի 20-ին այստեղ կայացաւ անբերրութիւնից վնասուած գիւղացիներին օգնող նորակազմ կօմիտէտի առաջին նիստը, որ որոշեց—կօմիտէտի անդամներից ուղարկել վնասուած գիւղերը, որ քաղցած որբերի, այրիների, աշխատելու անընդունակ ծերերի կամ հաշմանդամների ցուցակ կազմուի, որ հաւաքած տեղեկութիւնների համաձայն՝ բաժա-

նուի ալիւրը: Ապա կօմիտէտի անդամները մէջ ստորագրութիւն բացուեց, որ և պիտի շարունակուի քաղաքում: Միւս օրը, փետրուար 21-ն, կօմիտէտի կողմից յատուկ անձնակազմութիւններ գնացին առաջին կարգի վնասուած իննը գիւղերը: Երկրորդ նիստում քննուեցին գիւղերից բերած ցուցակները մանրամասն տեղեկութիւններով: Երևաց, որ իննը գիւղերից ամենից շատ կարօտ են և նեղութիւն են քաշում Վաչիան, Օրճան, Դելիսկան, Կորիւր և Գիւմիւրդան: Չանդուրա գիւղը, թէև ամենից շատ է վնասուել, բայց քաղցող ընտանիքներ համեմատաբար քիչ ունի, որովհետև քաղաքին մօտ է, և շատերը աշխատում են քաղաքում: Աւելի նուազ կարօտութեան մէջ են Մաճաղիան և, մանաւանդ, Քիլդան ու Մուրճախէթում: Երրորդ նիստում վերջնականապէս որոշուեց ներկայումս քաղցողների թիւը հետևեալ կերպով. Վաչիանից—56 տուն, 328 հոգի, Օրճայից—55 տ., 266 հ., Դելիսկայից—31 տ., 231 հ., Կորիւրից—49 տ., 187 հ., Գիւմիւրդայից—25 տ., 136 հ., Չանդուրայից—17 տ., 92 հ., Մաճաղիայից—14 տ., 67 հ., Քիլդայից—9 տ., 50 հ. և Մուրճախէթից—3 տ., 12 հ., ընդամենը 259 տ. և 1369 հոգի: Նոյնպէս որոշուեց, իբրև մի ամսուայ ապահովութիւն, մարդագլուխ ամեն մի հոգուն տալ 30 ֆունտ ալիւր կամ բոլոր 1369 հոգուն՝ մօտ 1027 պուգ, որից 650 պուգը այստեղ գնուեց. մի վազօն ալիւր էլ հեռագրով պատուիրուեց: Հիմա ցուցակագրուած կարօտ գիւղացիները քակներով գալիս են քաղաք և իրանց բաժին ալիւրը ստանում: Մտաքայ ասել որ այստեղի կօմիտէտը որոշեց բաժանել առայժմ միայն հազար ուրբու ալիւր: Մնացած երկու հազարը պահուում է մօտիկ ապագայի համար, երբ պահանջը աւելի մեծ է:

Ապա այստեղի կօմիտէտը հեռագիր ստացաւ Թիֆլիսի պ. Նահանգապետից, թէ գլխաւոր կօմիտէտը որոշել է գիւղացիների համար ձեռք բերել, իբրև սերմացու 100 սօմար կտաւատ (սօմարը 18 պուգ է) և 1500 պուգ գետնախնձոր, որ փոխարինաբար պէտք է բաժանուի կարօտ գիւղացիներին այն պայմանով, որ ստացած բերքից վերադարձնեն տուած սերմացուն: Կտաւատը և գետնախնձորը պէտք է առնուեն մինչև փետրուարի 24-ը գոյութիւն ունեցած գներով, որի համար փոխադրուած է 3000 ուրբի: Այստեղի կօմիտէտը մտադիր է կտաւատի մի մասը այստեղ առնել, իսկ մնացածը՝ Ալէքսանդրապօլի գաւառից բերել տալ: Գետնախնձորը կ'առնուի կամ դուխօբօրներից, կամ Ախալցխայի գաւառի Դամալա գիւղից:

ՍԱԼԿԻՒՄԵՆ

Ախալալալ